



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

616.936
Q - 88



616.936

Ա-88

ԱՀԱՅ, ԱՐՄԵՆԻԱ

ԲԺՇԿԻ ԶՐԱՅՅՆԵՐ Ն 5

ԳՈՂԵՐՈՑՔ

ԿԱ. Ա.

ՄԱԼԱՐԻԱ

ԴԻԱՆԻ Հ Կ Ա.

Եկամուտներուց



Թ Ի Փ Լ Ի Զ

Տիպոգրիա Տ-վա «Վերածու» և * Ցպարտան լնկ. «Վերածու»
Կամենմախեր»

Միհայլովսկ. պր., № 81. Տելեֆ. № 852.

1902

22 FEB 2013

128

30 JUL 2010

616.936

Q - 90 Բ.Պ. Ա.Ա.Հ. Ա.Բ.ՐՈՒՆԻ
ՄՐ

ԲԺՇԿ ԶՐՈՅՑՆԵՐ Ն 5

Դ Ա Ղ Ե Ր Ո Ղ Ց

Կ Ա. Մ

6
100
100
100
100

Մ Ա Լ Ա Ր Ի Ա

Նկարներով



Թ Ի Փ Լ Ի Ս

Տիպոգրաֆія Т-ва «Վերեչевъ и Каменмакеръ»
«Վերիչև և Կամենմախեր»
* 8պարտն ընկ. «Վերիչև և
Կամենմախեր»
Михайловск. пр., № 81. Телеф. № 852.

1902

7483

0005 JUL 83

Digitized by srujanika@gmail.com

ԵԱՀ ԿՐՏՃԵՂՋ ՎՐՈՒՄ

39 85 F DUU 85

三三〇

Температура 27-го априля

Дозволено цензурою. Тифлисъ 27-го апреля 1902 г.

29

波羅密多羅

-3-

卷之三

63

ԳԱՐԵՎԱՐԱ ՎՐԱՆԻ

1

ԴԱՎԻԴՈՂ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ

ոչ մէ օխրան մատենալուսայի դա զայգուանք
կամ Ամի շրջիանէ, թէ ինչ է դողէրոցը: Ու ան
տու նաւաբիկանուններ եւ անիւ տենիդ, ջերմ
ճահճային տենար, դողըցը, ընկմիջոյ ջերմ:
Քայլ դողէրոցը (պոլ և ազոցք) բառը շատ ճշգն
ճամփացաց թիւն է: Հայիս ու հրամագութեան մա-
սին, քանի որ, միբարի առաջ դող է գալիս, քայլ
այսոցը, պահանք: Ջերմ:

Ապկայն է մենք գիտենք, որ սեւանդութիւնը
միշտ պատճ կերպով չի բարձրվում, այլ ծառ
ծրագիր է կը բանեանում, ինչու ժամանակը պացած
արենք:

Այս պատճառով էլ հիւանդութեանը մի ուրիշ անուն էլ են տաել մալարիա: Մալարիա ասելով համբացված է համ դողեւոցը, համ էլ թաքան ջերմը: Մենք էլ չառաջաւու այս բառը դպրծ կածենք:

Երևանն իր վճականերով, ամեռող Արարատին
հովիսը, Թիֆլիս Կուր գետի հովիսով, Վայասանի
ընդարձակ պտղաբեր դաշտերը, ամեռող Սև ծովի եզ-

w. Φnn:

ხელ იღ დოკტ მითნაით է, აწავანდე
მთილებრივ ე დოკტ მარმარ მც, ესთ ი
დოკტ მარმარ ე, იორანგია ე ართ აზრობი-
ნებელ (ქსებრნ ის თანხელ) გარეგნია მცგრჩ ქა-
კოვ. — აწავანდე «ურაფია ე»: ურაფია და-
ლი ასელანია ე և დაანია ე ხაკაბონ
დიდ: პრავანდე დიდია ე ამრიდ მარმარ,
ასთამნებელ ჯისესლავანია ე ხრამ დებ ი
ქავე ე მთილი ანკილი მც: ზიძე აქნ ას-
თებანი ე რასია ი, ის მარაბასა აქნ ეს, მით
კარ-კარასიხეს ეს აწავანდე ასთ ყნდეთ ი
ნა: ას მხილე საუკუნე სასოთხილ სათვის ი
ე, დიდი ლიტენია ი ის «ფურაბალია ე»
(მადე მაგლ), ლიტენი თანხელ კალ-
თად ე, ეხებელ ლაქნადად, გათხელ დილის
ეფთია ე დალხს և ის გრე დილ ე: დათა-
ნია ე, იღ აწავანდე ფიჭია ე, ხალ გნა-
ოისტრინე և გნერაცე გათ არადანია ნა:

Դողը տեսում է մի քանի ըստէից մինչև
1—2 ժամ, երբեմն էլ մի քանի ժամ շա-
բունակ:

բ) Ջերմ կամ Տափուրին ¹⁾:

Գողի ժամանակ արխէնը զրսից քաշուել
երդլում ներս, այս պատճառով էլ
մաշկը (կաշին) ստուել էր, իսկ ներսի տա-
քութիւնը բարձրացել: Ձերմի միջոցին ա-
րիւնը նորսից լցվում է մաշկի մէջ ու տա-
քացնում նրան: Հիւանդն ինքը զգում է, որ
այրվում է, կարծէս ինձան զուր են լցնում
վրան և, եթէ ձեւով գնես հիւանդի վրա,
կը տեսնեմ որ, յիքաւի, կաշին այրվում է ու
չոր կիզիչ տաքութիւնէ զալիս ձեւիդ: Ձեր-
մից դէմքը կարմրում է, աշքուրը արիւն
լցվում, զլուխը պառյտ զալիս ու ցաւում է,
ականջները խաշում են, բերանը չորանում,
շնչառութիւնն ու զարկերակը աւելի ևս
արագանում են և հիւանդը հնոց է ընկնում:
Հիւանդը մնում է առաքութեան մէջ
3-4 ժամ, երբեմն էլ աւելի: Առաջին
Յետոյ ջերմը կամաց-կամաց իջնում է
և սկսվում է քրտինքը:

գ) Ք r s ի ն f: (գ

Ամենից առաջ քրտինք է զալիս կոնստակերում, յետոյ ճակատին ու դէմքի վրա, և ամբողջ մարմինը ծածկվում է առաս քրտնքով, որը երբեմն այնքան շատ է լինում, որ թուջում է շապիկը, վերմակ-դոշակն ու բարձը և հարկ է լինում հիւանդի շապիկը մի քանի անգամ փոխել։ Այդ ժամանակ սիրտն ու շնչառութիւնը հանդարտվում են, բերանի չորութիւնն անցնում է, ցաւերը գաղարում են և հիւանդը հովանում է.-մի չափազանց դրութալի թմրութիւն է զալիս վրան ու նա խոր քուն է ընկնում, որից զարթնում է զգաստացած ու առողջացած։

Քրտնքի շըշանը տեսում է նոյնպէս 2-3-4 ժամ և նրանով նոպան վերջանում է ու հիւանդն առողջանում, այնպէս որ կարող է պարապել իր գործերով մինչև հետեւալ նոպայի վրա հասնելը։

Ուրեմն ամբողջ նոպան (դող, չերժ, քրտինք) տեսում է 6—10 ժամ։

Միենայն կարգով դողէրոցքը կկրկնուի միւս օրը կամ երկու-երեք օրը մի անգամ և միենայն ժամերին։

2. ՄԱԼԱՐԻԱՅԻ ՄԻՒՍ ՉԵԼԵՐԸ.

Այս դողէրոցքի առօրեա, հասարակ ձեմն է, բայց կան և ուրիշ ձեռք։

1. Երբեմն հիւանդը (զլիսաւերապէս թոյլ երեխաները, ուրիշ հիւանդութեան տէր մարդիկ և ծերերը) չեն կարողանում դիմանալ այսքան տաքութեանը և մեռնում են։

Մըրանք կողստագեր ձեռն են։

2. Յաճախ պատահում է, որ դողէրոցք չկայ, բայց հիւանդը զանազան ցաւեր, գըլիսացւեր ունի։ Եւ, զլիսաւորը հինց այն է, որ այդ ցաւերը դողի պէս հինց միեւնոյն ժամերին են գալիս, ինչպէս դողէրոցքի նոպաները.—Խինա ենք տալիս ու ցաւերը կորչում են։

Սա էլ թաքուն դողն է։ Թաքուն դողը զանազան ձեռք է ընդունում և չատ ուրիշ հիւանդութիւններ է առաջ բերում։ Մէկը փոշաց, հազ կամ շնչարգելութիւն ունի, միւսը անդադար փսխում է, ցաւեր է զգում ստամոքսի մէջ ուփորը փրփում է, մի երբորդը արինհնոսութիւններ, նոյնիսկ կարկամումներ, անդամալուծութիւն, մարմի զանազան մասերի անզգայութիւն է ստանում և այլն։

Թաքուն դողից խլութիւն էլ է զալիս, կուրութիւն էլ և հարիւր տեսակ տկարութիւններ: Խինան զարմանալի հրաշքներ է անուն պատիսի գէպքերում:

3. Ի՞նչ է ԳՈՂԷՐՈՅՑՔԻ ԻՍԿԱԿԱՆ ԹՈՅՆԲ:

Գիտնականները վաղուց գիտէին (և հասարակ ժողովուրդն էլ գիտի), որ գողէրոցքը լինում է ճահճային, խոնաւ երկներում, ծովերի, լճերի ու գետերի տղմուափերին և առհասարակ այնպիսի տեղերում, որտեղ կանգնած, անշարժ ջուր կայ: Գիտէին նոյնպէս, որ ջերմը կլոր տարի չի լինում, այլ տարուայ որոշ եղանակներին. — գարնանն ու աշնաննը, — այսինքն. հէնց այն ամիսները, երբ աւելի խոնաւութիւն կայ և գետնի երեսին ջրել են հաւաքվում ու կանգնած մնում: Յայտնի էր, որ մարդուկ աւելի հիւանդանում են իրիկնապահից մինչև առաւօտ, այսինքն. երբոր գետնի խոնաւութիւնը գոլորշի է դառնում ու բարձրանում է օդի մէջ: Ջատ բաներ գիտէին մարդիկ, բայց չէին հասկանում, թէ ինչն է այս ամենքի պատճառը: Ասում էին, թէ այս կանգնած ջրերից թոյն է բարձրանում

և թունաւորում է մարդկանց բայց թէ ինչ էր այդ թոյնը, չգիտէին: ու եմա ու նորոյ Քսան տարի առաջ միայն գտան այդ




Նկ. 1. Մանրացոց:

թոյնը, երբ լաւ քննեցին հիւանդների արիւնը: Բայց առաջ տեսնենք, թէ ինչ է արիւնը:

Արինը մի հեղուկ է (զուր է), որի մէջ լողում են անթիւ-անհամար մանր գնդակիկներ, որոնց անունը դրել են արեան գնդիկներ:

Սրանք այնքան մանր են, որ պարզ աշքով տեսնելն անկարելի է, այլ միայն մանրացոյցի (մեծացնող գործիքի) միջոցով¹⁾, որը մեծացնում է առարկաները 1000—2000—4000 անգամ: Պէտք է ծակել ասեղի ծայրով հիւանդի մատը և մի կաթիլ արին հանել ու կաթեցնել մանրացոյցի ապակու վրա: (Տ. նկ. 1.)



Նկ. 4.


Նկ. 2. Արեան գնդակներ:
ա, ա—սպիտակ և բ, բ կարմիր:

¹⁾ Մանրացոյցի մասին մանրամասն առ. բժշկի զրոյցներ Ն 3. «Վարակիչ հիաւնդութիւնները և նրանց թոյնը» 1902:

Այս գիտողը գիտում է այդ կաթիլ արինը մանրացոյցի միջով և ահա թէ ինչ է տեսնում: (Տ. նկ. 2):

Արեան մէջ երկու տեսակ գնդակներ կան.—կարմիր և սպիտակ: Կարմիրները շատ աւելի բազմաթիւ են, քան սպիտակները:


Կարմիր գնդակներն են, որ արեանը կարմիր գոյն են տալիս: Եթէ այդ գնդակները հանենք, արինը անգոյն կդառնայ:



Նկ. 3. Կարմիր և սպիտակ գնդակներ: (ա. բ. գ. կարմիր, դ. ե. դ. է. բ. թ. սպիտակ գնդակներ):

Այս ենք տեսնում, երբ որ զննում ենք առողջ մարդու արինը:

Հիմքի մի զողէրոցք ունեցողի արիւնից
մի կաթիլ վերցնենք ու մտնրացոյցով
զննենք: Ահա թէ ըստ կըտեսնենք: (Տ. նկ. 4)



Նկ. 4. Մակարոյծները մտել են արեան գնդակների
մէջ:

Տեսնում ենք, որ կարմիր գնդակի մէջ
մտել է մի մարմիկ:

Դա հէնց մալարխյի մակարոյժն է,
այսինքը մի էակ, որը արխն ծծելով է
ապրում:


Նա մտնում է արեան գնդակի մէջ (ձև 1
և 2), ծծում է նրա հրթը ու կարմիր ներկը,
ինքը մեծանում է, կարմրում, իսկ կարմիր
գնդակը ընդհակառակ քանի գնում նուա-
զում է քշանում ու կորցնում իր ալ զոյնը
և անզոյն դառնում:

Մի քանի ժամուայ մէջ այս մակարոյ-
ծը ուտում-քանդում է արեան գնդակը (ձև 3)
և տուրպում-մեծանում, լցնում ամբողջ
գնդակը (ձև 4): Այն ժամանակ նա ինքը
ցւրփում է, հերձվում ու ծնունդ է տալիս
10—20 մանր ձագիկների

Այս մանր կէտերը մատաղ մակարոյծեր
են. Նրանց մօք բարակ պարկը պատովում
է և ձագիկները ազատվում են ու լցվում
արեան մէջ (ձև 5): Յետոյ մեծանալով նրան-
ցից ամեն մէկը էլի մտնում է մի նոր ա-
րեան գնդակի մէջ, նոյնպէս ուտում է նրան,
ինչպէս իր մայրն էր արել, և նոյնպէս
ցւրփում է ու մատաղ մակարոյծներ տալիս:
Եւ այսպէս ահվերջ մինչև հիւանդի լաւա-
նալը:

Այս մակարոյծներին թիւ ու համար
չըկայ: Ահագին քանակութեամբ լցվում են
նրանք արեան մէջ և մի երկու ժամուայ մէջ
բազմանում ու լցնում արեան գնդակները:

Գիտնականների ասելով, այն միջոցին
երը հերձվումն սկսվում է, սկսվում է և
դողը: Ուրեմն զողի պատճառը մակա-
րոյծների բազմանալն է: Քրտնքի ժամա-
նակ այս մակարոյծները բոլորովին կոր-
չում են. — Էլ չենք դտնում նրանց ա-



րեան մէջ (երեկի նրանք հաւաքվում են փայծաղի մէջ), չետեեալ օրը, դարձեալ դողէրոցքի ժամանակ, նրանք դուրս են գալիս իրանց թագնուած տեղից և էլի ցւրվում արեան գնդիկների մէջ և այսպէս անվերջ: Եթէ դողէրոցքի նուպան օրըմէջ է վրա տալիս, մակարոյծներն էլ օրըմէջ են բազմանում և այլն:

Հիմի ինձ կը հարցնի ընթերցողը.

— Բժիշկ, դուք ասում էք, թէ այդ մակարոյծները վշացնում են մեր արեան ամենազլիւալոր մասը, այն է. կարմիր գրնդիկները, բաս ինչպէս է, որ դողէրոցք ունեցող հիւանդը երկար տարիներ ապրում է առանց այդ գնդիկների:

Սուանց կարմիր գնդակների մարդ ոչ միայն երկար տարիներ, այլ ոչ մի քոպէ էլ չի կարող ապրել: Բանին էլ հէնց այն է, որ այդ գնդիկները նորից գոյանում են ու լրցվում արեան մէջ և վշացածների տեղը բռնում: Իսկ եթէ դողը երկարում է, ամենքը գիտեն, որ հիւանդը գոյնը զցում է, նիհարում է, թոյլ է լինում, գլխացաւեր ու զլիքի սրտոյտ գալ է ունենում և այլն: Այդ նշանակում է, որ հիւանդի արիւնը պակսել է, և պակսել է, որովհետեւ այլատ լաւ չի կա-

1006
2/9275

բողանում կռուել մակարոյցների ճեղքած թւրեմս մենք հիմի գիտենք, թէ ինչ հիւանդութիւն է բողէրոցքը և ինչք է նա առաջանում:

Դողէրոցը կամ ծահային տեսողակամ մալարիան մի հիւանդութիւն է, որը առաջ է արիս նրանից, որ մի տեսակ մանք մսիկներ են մտնում արեան մէջ, այնտեղ շատունում եւ վնասում արեանը:

4. ՄՈԾԱԿՆ ՈՒ ԴԱՂԵՐՈՅՑՔԸ:

Այսպիսով մենք իմացանք մալարիայի իսկական պատճառը, բայց այդ բաւական չէ: Հարկաւոր էր փնտուել-տեսնել, թէ ո՞րտեղից եւ ինչ կերպով են մտնում մեր մէջ այդ վրարոյցները:

Հատգիտնակամներ ամեն երկրներում զբաղուեցին այդ խնդրով. Արոնեցին այդ մակարոյց մարմիկները ջրերի, օղի, հողի մէջ և ո՛չ մի տեղ չգտան: Յետոյ մի բժիշկ մտածեց, չլինի թէ մոծակների մէջը կայ այդ մանք էակներից.

Արոնեցին և, ճշմարիտ որ, մոծակների արեան մէջ զտան այդ մակարոյցներից:

Մոծակները երկու տեսակի են բաժան-

վում. Կան մալարիաքեր (կամ վնասակար) և անվաս մոծակներ, ինչպէս կան թունառոր և անթոյն օձեր: Վնասացներ մոծակներից միայն որձերն են կծում, իսկ էղեքը բոյսների հիւթերով են կերակրվում: Եղեքը իրանց ձուիկները զնում են կանգնած ջրերի երեսին. այս ձուիկներից դուրս են զալիս թրթուրներ, որոնք ապրում են ջրի մէջ մինչև հասունացած միջատ զառնալը: Ուրեմն ջուրը, այն է լճացած կանգնած ջուրը, անհրաժեշտ է մոծակների աճման համար. մանաւանդ ծովեղբի տիզմերը, որտեղ աղի ջուրը խառնվում է գետի ջրի հետ և ճահիճներ կադրմում: Հոսող ջրերում (գետերում) այդ միջամներից չեն գտնվում:

Թրթուրները, ապրելով ջրի մէջ, շուտ շուտ բարձրանում են ջրի երեսը և օդ ներս շում իրանց շնչափոխիկով: Այդ յատկութեան վրա է հիմնուած նրանց ոչնչացնելու ձևը: Նրանք կարող են ամրող ձմեռ ջրի տակ մնալ: Թրթուրն անվինաս է, որովհետեւ չի խածում, բայց շուտով նա հասունանում է, զանում է մոծակ և այն ժամանակ նա վտանգաւոր է: Մոծակն արդին օդարնակ է, բայց շատ դանդաղ է թոշելում և իր ծնած տեղից հեռու չի կարողանում

Թոշել. սակայն կարող է տեղափոխութել երկաթուղիների եւ նաևերի հետ: Նա երեւամ է գլխաւորապէս մայիսին և անհետանում հոկտեմբերին: Հմեռը թագնվում է ծառերի ճեղքուածների ու փեճակների և թուփերի մէջ:

Քամին ցրում է մոծակներին, այդ պատճառով էլ բարձր տեղերում մոծակ չկայ:

Վտանգալից ժամանակը երեկոյից մինչև առաւոտն է, այսինքն, մինչև արեկի ծագելը, որովհետև հնաց այդ ժամերին են դուրս գալիս միջատները իրանց թաքացած տեղերից:

Քանի որ, ինչպէս տեսանք, գողերոցքի թոյնը գտնվում է միմիայն մարդու ու մոծակների արեան մէջ, ուրեմն մոծակն ու մարդը իրար վարակում են հիւանդացնում:

Ի՞նչպէս:

Մոծակը կծում է հիւանդին ու ծծում նրա արիմնը, արեան հետ էլ մաշարիայի մակարոյցները, որոնք արեան մէջ բազմանում են: Յետոյ այս հիւանդ մոծակը կծում է մի առողջ մարդու, լցնում է նրա արեան մէջ թոյնը եւ հիւանդացնում նրան:

Մրանից գուրս է գալիս այն, որ քանի

մոծակը հիւանդի չի կծել ու նրա արիմնից չի վերցրել, նրա մէջ թոյն (այսինքն մակարոյց) չըկայ:

Այստեղից պարզ է, որ մոծակի մէջ ընականաբար չկան մակարոյցներ, այլ սրանք երեւում են այն ժամանակ միայն, երբ մոծակը կծում է հիւանդ մարդուն ու ծծում նրա արիմնը:

Մի գիտնական այսպէս փորձ արեց: Նա մտածեց: «Եթէ առանց մոծակի կծերուն մարդ գողէրոցք չի պտանայ, ուրեմն պաշտպանեմ ինձ մոծակներից և առողջ կմնամ»: Նա չորս ուրիշ մարդ վերցրեց իր հետ ու գնաց մի չափազանց ջերմուտ երկիր և այնտեղ ընակուեց երկու սենեակի մէջ, սրանց լուսամուտներն ու դռները փակեց շատ խիտ ցանցով (ինչպէս մաղը), — այնչափ խիտ, որ մոծակը չըկարողանայ միշով անցնել ու սենեակը մտնել:

Երեսուն երեք օր ապրեց բժիշկը իր չորս ընկերների հետ այդ սենեակներում, մոծակները ահապին երամակներով (խմբերով) վզվզում էին օդի մէջ, նրանց տան չորս կողմը ամենքը հիւանդացնում էին մալարիայով, բայց նրանց իսկի գլուխմներն էին

շցաւեց և բոլորովին առողջ վերադարձան
իրանց քաղաքը:

Պարզ էր, որ հիւանդութեան պատճա-
ռը մոծակների խայթոցն էր:

Հակառակ փորձեր էլ են արել:

Հիւանդ մոծակներին գցում էին վան-
դակի մէջ և մի առողջ մարդ թեր մէջն էր
մտցնում.—մոծակները կծում էին թեր ու
մարդը գողէրոցը էր ստանում: Մինչև ան-
գամ վերցնում էին այդպիսի վանդակներ,
(որոնց մէջ վարակուած մոծակներ կային)
ուղարկում էին շատ հեռու տեղ (5—6
օրուայ ճանապարհ), և այնուեղ նոյնպէս
մէկը թեր վանդակի մէջն էր մտցնում ու
հիւանդանում:

6. ԽԵԶՊԵՍ ՊԱՏՊԱՍՆԵՆՔ ՄԵՐ ԱՆՁՐ Փ
ՄԱԼԱՐԻՍՅԻՑԻՑ:

Այն ժամանակ միայն մատզ կարող
կլինի պաշտպանել իրան մի թշնամուց, երբ
լաւ ճանաչում է այդ թշնամուն, երբ գիտի
նրա թոյլ կողմերը:

Մարարիամի խակական պատճառը վեր-
ջապէս այսօք մեկ յալոնի է և ուրեմն
աւելի հեշտ կերպով կարող ենք պաշտպան-

ուելասնը կորստաբեր հարուածներից:
Մինք ցոյց տուինք, որ մոծակներն
են հիւանդութեան տարածողները, որ նրանք
աճում են լճացած, ճահճային ջրերի մէջ:

Ուրեմն ամենից առաջ պէտք է չորաց-
նել ճահճայինները:

Ճահճայինների չորացները ահապին նշա-
նակութիւն ունի, որովհետեւ դրանից մո-
ծակներն անհետուած են: Եթէ գժուար է
չորացնել միծ ճահճայինները, գոնէ տնե-
րի մօտ կանգնած ջրերը պիտի հեռա-
ցնել, իսկ դրա համար հարկաւոր է միայն,
որ բակերում ու փողոցներում փոսեր չլի-
նեն, որպէս դի անձրեթ ջրերը չկանգ-
նեն: Վակերի գետինը պէտք է միշտ
թեք լինի, որ ջրերը հեշտութիւնով հո-
սան: Ճահճային տեղեր չորացնելու համար
նոյնպէս տներում են արագ աճող ծառեր.
Նոճիներ և էֆկալիպտուս, որոնք ծծում
են գետնի խոնաւութիւնը և միևնույն ժա-
մանակ շեն արգելում արեին թափանցել
գետին: Ճրճորների բերանը պէտք է ծած-
կած լինի: Միծ լճացած ջրերի մէջ մո-
ծակների թրթուրները ոչնչացնելու համար
բաւական է այնուեղ ձգներ աճեցնել, որով-
հետեւ ձկները պարմանալի ագահութեամբ

ոչնչացնում են նրանց։ Աւելի փոքր տարածութիւն ունեցող ջրերը մոծակի թրթուրից մաքրելու համար զործ է դրվում մի ուրիշ միջոց, այն է. նաւթ կամ կերսուին կամ որևէ է ձեթ։

Ահա թէ ինչպէս։

Մենք գիտենք, որ թրթուրը չի կարող ապրել ջրի խորքում, նրան օդ է հարկաւոր և այդ նպատակով նա շուտ-շուտ ջրի երեսն է դուրս գալիս ու օդ ծծում իր շնչափոխիկով։ Ուրեմն, եթէ ջրի երեսը մի մածուծիկ նիւթ ածուած լինի, այդ նիւթը կը լցուի թրթուրի շնչափոխիկը և կը խեղդի նրան։ Այդպիսի ջրերի երեսին մի քանի տեղ նաւթ են լցնում և սա իսկոյն տարածվում է ջրի երեսը։ կամ թէ չէ վերցնում են մի շոք, թաթախում են նաւթի մէջ ու քսելով անց կացնում ջրի երեսով։ Ջորը ետքից նաւթ է թողնում և այսպիսով ջրի երեսը նոյնպէս բարակ շերտ նաւթ է կանգնում։

Այս քանը սկսում են անել գարնան սկզբներին, երբ թրթաւրը գեռ մոծակ շիդարձած, և ամառուայ մէջ կրկնում են մի քանի անգամ, որովհետև նաւթը կամ կերսուինը գոլորշիանում է, անհետանում, և

ջրի երեսը դարձեալ բացվում է։ Պէտք է կրկնել երկու շաբաթը կամ գոնէ ամիսը մի անգամ, մինչև ցըտերը համեմ։ Դրա ծախսը միանգամայն չնշին բան է։

Ահա այն միջոցները, որ պէտք է գործ դնեն գիւղերի ու քողաքների բնակիչները ընդհանուր ոյժերով ու ընդհանուր ծախսերով։

Բացի այդ, ամեն մարդ էլ պիտի ինքն իրան պաշտպանի։

Ինքնապաշտպանութեան համար հետեւեալ միջոցները պիտի ձեռք առնել։

2) Տունը.—Յայտնի է, որ ջերմային երկրներում աւելի շատ են հիւանդանում ցած տեղերում բնակուողները։ Օրինակ. եթէ քաղաքի կամ գիւղի տների մի մասը ներքեսում է (գետի ափին), իսկ մի մասը բարձրում—սարի վրա, ներքին տների բնակիչները միշտ հիւանդ են լինում, այն ինչ սարի վրայինը ազատ են մնում զողից։ Ուրեմն տները պէտք է որքան կարելի է բարձր տեղերում շինել, իսկ եթէ այդ գժուար է, այն ժամանակ գոնէ պէտք է ճահճներից և կանգնած ջրերից հեռու բնակուել։ Գիւղերում տնակները երբէք չը պէտք է փոսերի մէջ շինել, այլ բարձր

թումբերի վրա, որովհետև բարձր սևգերնեմ անձրեի ջուրը չի կանգնում, ու վճպմում: Բարձր աեղեքում ընակուելը միտւրիշ արաւելութիւն էլ ունի, այն է, որ այնտեղ օդափոփոխութիւնն աւելի ազատ է կատարվում. մարամիներ են լինում, որոնք ցըմում են ու ոչչացնում մոծակներին: ոյժու գումարով:

Այս նոյն հիման վրա չպէտք է գետնափոք տներում ապրել, այդպիսի աները հարիւր տեսակ գտանդներ են առաջացնում, ի միջի այլաց և ջերմ, որովհետև այդ տները միշտ խոնաց են ու թաց, նբանց պատերի տակ ջրեր են ճաւարփում, փտռում և այլն: Նկատուած է նոյնպէս, որ հրկյալքիանի տների, մէջ ներքեփ յարկում դնակուազները ջերմում են, իսկ վերին յարկինը ոչ: Չատ փատ սովորութիւն է տների շուրջ ջր խիտ ծառեր տնկելի: Այդ ծառերն արգելում են արևին վետանն ընկնել և չորացնել հողը: Խիտ ծառերը չեն թողնում նոյնպէս, որ քամին ազատ միշի ու մարբի օդը: Մոծակներն էլ շատ յարմար բներ են շինույ այդ ծառերի վրա, յայտնի է, որ նըանցից անտառներում շատ կմն: Խորհաւըդ կը տանք տների շուրջը նոճի և էֆկալիատուն տնկել, որոնք լաւ չորացնում են վետինը:

-ով 3) Առնանալուու ու լոծակաշատ տեղ զերում պէտք է ցանցեր գործ ածել գննեց ըի ու լուսամտաների առաջ: Այս ցանցերը պէտք է շինուան երկաթէ թելերից և շրջանակի մէջ ամրացնուեն, ու երեկոները, առ ընթ մայր մտնելիք, հալցուան լուսամուռներին ու դուներին: Ցանցերը կարող են լինել նոյնպէս և բարակ կիսէից (մառ լայից): Ինչից Ալ շինուած կիննեն այդ ցանցերը, նրանոց ծառկերը պէտք է այնչորի մտնը լինին, որ մոծակու անկարող լինի մէկներօվն անցներուն ուր սովորուած մասնաւ մոռ նոր սուրկիներուում ընտկիչները լինում են այստշպամբների կամ կտուըների վրա և առնասարակ դուրսընառ մարտաւ: Առաջ նրբերէք չպէտք է բակիքրում ցած ունի վեր քննել, որովհետև, սինչպէս ասել կը ը, մոծակները ներքեւուն են հաւաքփռն: Անըլի լաւ է էլի կտուըների վրա քննել: Բայց որտեղ էլ քննն, պնհանեցն է թափանցիկ (ցանցաւոր) գործուածքներից վրան շինել կատ մահնակալի վրա կիսէից վարագոյր գցել, ինչպէս այդ վազուց գործ է ածվուած շոր տեղերում, իսկ եթէ այդ էլ անհնար է, խորհուրդ կրտանք հազնուած պառկել և առաջ առ առաջ ամսայի մասից բացի բացի:

գլուխը փաթաթել այդպիսի կիսէով ու ձեռներին ձեռնոցներ հազնել:

4. Ճամբորդները, երբ ստիպուած են լինում չերմոտ տեղերում բացօթեայ գիշերել, պէտք է իրանց մօտ օջախ վառեն, որովհետև մոծակները ժողովվում են կրակի շուրջն ու այրվում, ծուխն էլ փախցնում է նրանց:

5. Փորձերը ցոյց տուին, որ մոծակները փախչում են գանազան հոտերից, օր կերոսինի կամ կարբուեան թթուի: Այնպէս որ կարելի է սենեակում այս հեղուկների մէջ թաթախած շորեր կախել, ափսոս միայն որ նրանց հոտը ևս մարդուն անախորժէ: Զանազան հոտաւէտ բաների ծուխը առանձին նշանակութիւն չունի, որովհետև միայն ժամանակաւորապէս թմբեցնում է մոծակներին, բայց չի սպանում:

6. Պէտք է խմել միայն թարմ մաքուր չուր (գետի կամ, աւելի լաւ է, աղբիւրի), իսկ եթէ ստիպուած են ջրհորի ու առհասարակ կանգնած չուր խմել, հարկաւոր է նախապէս եփ տալ ու սառեցնել: Աւելի լաւ է, ի հարկէ, ջրի փոխարէն թէյ գործածել:

7. Արաղ-գինին վնաս են. երբէք չը

պէաք է գործ ածել: Նրանք ոչ միայն չեն կազդուրում մարմինը, այլ ընդհակառակը թուլացնում են: Արբեցողները աւելի դժուար են տանում դողէրոցքը:

8. Պէտք է աշխատել երեկոները (արել մայր մտնելիս) տուն վերադառնալ, որովհետև հինգ այդ ժամերից է սկսվում մոծակների արշաւանքը:

9) Օտար մարդիկ, գնալով չերմոտ երկիր, նախազգուշութեան համար պիտի աւամեն օր խինա (քինաքինա) ընդունեն, հինգից մինչև 10 գրան (երեխաները 2—4—5 գր.): Խինան յաճախ կանգնեցնում է դողէրոցքը: Բնիկներն էլ կարող են օգտուել այդ միցոցից:

Դրանք են անհրաժեշտ զգուշութիւնները:

7. ԽՆԱՄՔ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Դողէրոցքի ժամանակ պէտք է լաւ ծածկել հիւանդին, ոտերի տակն ու կողքերին շշերով տաք չուր զնել, կամ ագուր ու խիեր տաքացնել ու զնել անկողնու մէջ: Տաքութիւնը վրա տալիս, ընդհակառակ թեթևացըք վերմակները, վերցըք շշերն

ու խփերը և պառը խոնելիք տուեք հիւանդին,
որ սիրար հովանա իսկ երբ քրտինքը եկամ,
հանգիստ թողէք մինչն վերջը ու յետոյ
միայն (երբ տաքութիւնը իջաց կլինի) սպի:
տակեղէնը փոխէք:

Եթէ զիմացաւը ստատիկէ, եթէ գէմ-
քը արնաւալած է, պէտք է զիմին սպա-
ցրած ջրով քաթաններ ու նայն իսկ աս-
սուցավ պարկ դնել: Եթէ հիւանդը ստուել
է ու չի կարողանում տաքանալ, շփէք ստերն
ու թեկերն, նպանգէս տաքացքած ջրերը
ագուրներ ջարէք շուրջը: Խինան, մակարիացի
դէմ մի չափազանց գօրեկ դեղ (Երբ բայց
ժողովարդը վայրիվիրոյ, առանց չափի է
զործ ածում):

Խինան պէտք է ասի, նայելով հիւանդի
հասակին, 5—6—10 դր. օրական երկու ան-
գամ, իսկ երեխաններին—օրական այնքան
զրան, որքան տարեկան են: Օրինտկ 5 տա-
րեկան երեխային կըտաք $2\frac{1}{2}$ դր. օրական
երկու անգամ: Այս գեղը գոզցոցի ու ջեր-
մի ժամանակ չի կարելի խմեցնել, այլ որ-
քան կարելի է դոզցոցից առաջ: Օրինակ,
եթէ նոպան սկսվելու է 1 ժամին, խինան
կըտաք առաւոտը 7-րդ ժամին: Լաւ կրկնի
մահաց պայմանը դոզցուածի զայրաւելու

մէկ մասը 7 ժամին տալ, միւսը—10-ին
(օրինակ, հինգ-հինգ դրան):

Արմատացած մալարիայի դէմ (եթէ
ոչինչ չի օգնում) միակ միջոցը օպա-
փոխութիւնն է: Երբ տեսնում էք, որ
հիւանդը անդադար ջերմում է, կամ ջերմը
շուտ-շուտ նորոգփում է, որ նա նիհարում է
ու զունատփում, լերին ուռած և այլն, տա-
րեք նըան մի առողջ (ոչ-մալարիային) եր-
կիլ, մի սարուտ տեղ: Երբեմն հէնց որ հի-
ւանդը հեռանում է ջերմուտ երկրից—լաւա-
նում է:

Արեան սակաւութեան ու հիւծուած-
քի դէմ նոյնպէս օղափոխութիւնն է հարկաւոր:
Պէտք է ապահով տեղ տանել, լաւ օղի մէջ
պահնել, մաքուր ջուր խմեցնել ու լաւ սնունդ
տալ: Այսպիսիններին բժշկութիւնը մկնդեղով
ու երկաթով է լինում, բայց այդ գեղերը
միմիայն բժշկի խորհրդով կարելի է զործ
ածել:

Վ Ե Ծ Զ



Հեղինակի միւս հրատարակութիւնները.

Філіп Генріх Гюнзбург

- | | | |
|------|--|-------|
| № 1. | ՄԻ ԲԱՐԵ, երկորդ տպ. | 5 կ. |
| № 2. | ՎԱՏ ՅԱՅ. | 6 կ. |
| № 3. | ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴԱՍԹԻՒՆԵՐԸ ԵՎ
ԿՐՈՆԸ ԹԱՅԵԸ 23 նկ. | 15 կ. |
| № 4. | ԹԱՅԱԿ ԿԱՄ ԲԱՐԱԿՈՅԱԿ. | 10 կ. |
| № 5. | ԳՐՈՒՐՈՅՔ ԿԱՄ ՄԱԼԱՐՔԱԾ. | 5 կ. |
| № 6. | ԻՆՖՈՐԱՆՑԱԿ ԿԱՄ ՅԱՐ ՅԱՅ. | 3 կ. |

(Յոյնու էլ նկարներով)

Պատասխան են՝ 1. Մի ծառ, 2. Նորածին մանուկների հիւանդութիւնները, 3. Ծաղկեր և ծաղկի կարիքը, 4. Քութէշ կամ Սկաբատինա, 5. Ի՞նչ է մլակը, 6. Ի՞նչ է երազը, 7. Կարմբուկ, 8. Խնամքի ձեր մանուկների աչքերն ու ականջները, 9. Պատահական ցաւերն ու հիւանդութիւնները և նրանց բժիշկները, 10. Պատահիների սխալները:

Յախվում են Կենդրանական և Գուտտենից
գրախանություններում, նախպէս հեղինակի մօտ:

Հեղինակի հասցէն. Տիֆլիս, Ճ-րу Վ. Մ. Արցւոնի.

ՀՀ Ազգային գրադարան



NL0289108

7483